


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Պուլկարիոյ համար
ցարեկան ֆրք. 10
վեցամսեայ " 5
Արտասահման
ցարեկան ֆրք. 12
վեցամսեայ " 6
ԿԱՆԻՒԿ



Գրութիւնք իւր չեն
տրուիր:

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN
K. STEPAN!
BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Եթէ կ'ոգե՛ք «Հայեղի»-ին մէջ աղոյժ երեւնալ,

Պարտիք ահա ինչ եւ ազնիւ դէմք մը ունենալ

ԱԶԳԱՅԻՆ



(ԱՅՍՏՐՈՒԱՆ ԹՂԹԱՔԵՐ)

Ս. Պատրիարքը իր հետն ունենալով
Պատրիարքարանի Ա. գործակատարը անցեալ
ուրբաթ օրը ժամը Տին կայս. պալատ գնաց,
յետոյ Գալուստէի բրթալով այցելութիւն
տուաւ Պատական եւ Կրօն. գործոց նա-
խարարին եւ տեսակցութիւն մը ունեցաւ Կի-
լիկիոյ կաթողիկոսական ընտրութեան խնդրին
վրայ:

— Պատրիարքական փոխանորդ Տէր
Դաւրիէլ եպիս. ճեփահերձեան՝ ընկերակ-
ցութեամբ Տ. Ներսէս Ա. Դանիէլեանի, եր-
կուշաբթի օրը այցելութիւն տուաւ այն դե-
պանաւորները որոնց տարեգլուխ էր նոյն
օրը:

— Վեներաբելի Մխիթարեան Միաբա-
նութեան անդամներէն Մեսրոպ Ա. ճերմակ-
եան, որ բաւականապէս մայրենի եկեղեց
պէս գիրկը վերագործած էր, այս անգամ
գարձեալ Հայ Հոովմեականաց Պատրիարքա-
րանը դիմելով, անցեալ ուրբաթ օր վերստին
Հոովմեական եկեղեցին ընդունուեալ է: Բարի
ճանապարհ:

ՄԻՍ ՃԷՆՔԻՆՍ

Պարտիզակէն կը գրեն «Արեւելք»

«Այս շաբաթու գիւղէս մեկնեցաւ Միս Ճէն-
քինս, որ տարիուկէսէ ի վեր գեղիս Որբա-
նոցին մէջ կը ծառայէր օգտակարապէս: Ին-
քը բնիկ կալէսցի, եկած էր հոս յատկապէս
որբանոց մը գործին համար: Որբանոցը այ-
ցելոյնքը զարմանքով կը դիտէին այդ ազ-
նուական անգլուհին խոնարհ ոգին եւ գոր-
ծելու ջերմեամբութիւնը: Պատկերներուն կը
տանէր ամեն տեսակ մայրական խնամք, եւ եր-
բեմն կը մտնէր անանկ գործերու մէջ, զորս
մեր շատ մը նազելափայլ օրիորդները՝ հե-
ռուէն իսկ դիտել չհաճէին: Իր մեկնումը
մեծ ցաւ պատճառած է որբերուն եւ Որբա-
նոցին հետ առնչութիւն ունեցողներուն: Ազ-
նիւ անգլուհին այնքան ջերմօրէն կը սիրէր
մեր պատկերները, որ հեծկտալով միայն կըր-
ցած է մեաք բարով ըսել անոնց, յոյս յայտ-
նելով միանգամայն որ օր մը վերստին իրենց
հետ ըլլալու մխիթարութիւնը ունենայ այս
Որբանոցին մէջ: Միս Ճէնքինս՝ անձնուիրու-
թեան սքանչելի օրինակ մը թողած է հոս իր
անմիջական շրջանակին եւ գեղացիներուն վը-
րայ: Հեռը կը տանի մեր որբուկներուն ան-
կեղծ շնորհակալութիւնները եւ յարգանքները:

Պուլկարիոյ եղեմոսֆը

Սօֆիայէն կը հետադրեն թէ Պուլկարիոյ իշխանապետութեան և Պանքաներու ներկայացուցիչներու միջև կատարուած բանակցութիւնները ուրբաթ օրը աւարտուի են եւ որոշուեր է 25 միլիոն ֆր.ի փոխառութիւն մը կնքել գանձարին պարտաթուղթերով, հարկերին վեց տոկոսով և հարկերին իննսուն իսկական արժէքով: Փոխառութիւնը հինգ տարիէն պիտի հատուցուի: Ծխախոտի տուրքը անոր փոխարէն յատկացուած է: Փոխառութիւնը պիտի յատկանայ յունուարի և փետրուարի կտրոններուն հատուցմանը որոնց գումարը կը հասնի հինգ միլիոն ֆր.ի: Պիտի վճարուի այն $3\frac{1}{2}$ միլիոնի գումարը զոր Պանքաները փոխ տուած են Պուլկար կառավարութեան, նաեւ Ազգային Պանքային կողմէ կառավարութեան գանձուն փոխ տրուած գումարները: Պիտի հատուցուի Օսմ. Հանրային Պարտքի Վարչութեան պահանջը Արեւելեան Բուժէլիի տուրքի հաշուէն: Պուլկար կառավարութիւնը այդ փոխառութեան մասին տակաւին ունի է ծրագիր չէ ներկայացուցած Սոպրանիին: Սիտիոն ուրիշ ծրագիր մը ներկայացուցած է որով արտօնութիւն կուզէ 40 միլիոն ֆր.ի չափ պարտաթուղթեր շրջաբերութեան հանել: Այդ ծրագիրը գիշեր ատեն Սոպրանիէին կողմէ նկատողութեան առնուելով երկար վիճաբանութիւններէ ետքը ընդունուեր է: Սոպրանիէն մինչև յունուար 23 դադրեցուցած է նիստերը:

Փ Ո Ւ Ն Ջ

Ճշմարիտ ուրախութիւնը ինչպէս նաեւ չիմաստութիւնը աշխարհիս վրայ հանգարտ, լուիկ ու բիշ ընկերներով կը պտըտի:

Հետաքրքրութիւնը յառաջդիմութեան, բայց միանգամայն շատ սխալներու աղբիւր է:

Անիրաւութիւնը մոռնալ ու ներելը՝ առաքինի մարդուն վրէժխնդրութիւնն է:

Գոթադրութիւնը այս աշխարհիս մէջ դպրոց մըն է, ով որ աս դպրոցը գացած չէ, բան մըն ալ սորված չէ:

Հարուստի մը սրտին աղբատի մը սրտէն ունեցած տարբերութիւնը սա է որ, անորը հոգեբով, ասորը յոյսերով լեցուն է:

Աղբատը շատ բանի կարօտ կը մնայ, իսկ ագահը ինքզինքը ամեն բանի կարօտ կընէ:

Մ Ա Կ Դ Ի Ր



Մակդիրը Բ՞նչպէս կը բաշխուի:

— Իւրաքանչիւր անհատի բնաւորութեանը համեմատ:

— Ուրեմն իր գործը ձգելով ուրիշ գործին ետէն ըլլողին ինչ մակդիր կուտան.

— Գինչ մարդ:

— Երկու անձանց գաղտուկ խօսած ժամանակ ահանջ դնող երրորդի՞ն.

— Անկիրթ:

— Չիտցած բանին վրայ յամառող ու սխալ մեկնութիւններ տուողի՞ն.

— Իմաստակ:

— Առանց վերջը մտածելու բերնին եկածը դուրս տուողի՞ն.

— Անխոհեմ:

— Հարսնիքին տունը անօթի մնացողին.

— Անձարակ:

— Ամեն մարդու խօսքին այո՛ ըսելով գլուխ խոնարհեցնողի՞ն:

— Կեղծաւոր:

— Չի հասկցած ու չի գիտցած բանին վրայ կէս մը լսելով վճիռ արձակողի՞ն.

— Անմիտ:

— Անարժանաբար ազգային պաշտօններու համար քուէ ստացողին .

— Կոյրերու մէջ ապրող :

— Դրամօժիտով աղջիկ փնտռողին .

— Ծակ՝ գրպան :

— Կարճատես չըլլալով ականց գործածողին .

— Հուկիթ :

— Երիկունները քանի մը դուռ ձեռք չառած իր տանը դուռը գտնել չի կարողացողին .

— Զբաղեալ մարդ :

— Անկէ ասկէ թերթ և հանդէս մուրալով՝ կարդացող ունեւորին .

— Ցած մարդ :

ՋԱՄԷՆ

Սխալ համբոյժ մը . — Պ. Խ. Ս. անցեալ իրիկուն Սիրքէճիի կայարանը գացած էր, դիմաւորելու իր կինը որ Եւրոպայէն կը դառնար : Պ. Խ. Ս. կարճատես էր և մութցած ըլլալով չէր կրնար չորս կողմը տեսնել, դժբաղդաբար ակնոցն ալ առնելու մոռցած էր : Վերջապէս կառախումբը հասաւ : Պ. Խ. Ս. անմիջապէս դուրս նետուեցաւ եւ վազկոնի մը մէջ տեսաւ սե քօզով կին մը որ իր կնոջ շատ կը նմանէր . ուստի սկսաւ ողջադուրել զայն ու համարուել : Կինը իր ձեռնոցաւոր ձեռքերով աղուորիկ ապտակ մը իջեցուց կարճատեսին երեսին : Պ. Խ. Ս. տեսնելով որ սխալած է, անմիջապէս առաւ գլխարկը որ գետինը զըլորած էր և առանց ձայն հանելու մէկ կողմ քաշուեցաւ . բայց բռն իսկ իր կինը որ ուրիշ վազկոնի մը մէջ կը գտնուէր և որ այդ տեսարանը դիտած էր, սատիկ բարկացած նախատինքներու տարաւ մը տեղացոյց իր էրկանը գլխուն և կառք մը նստելով մօրը տունը գնաց : Խեղճ կալ ճատեսը շատ աշխատեցաւ իր

նշալը բացատրելու համար, բայց օգուտ մը չունեցաւ : Կինը ամուսնաթողութեան դատ բացած է էրկանը դէմ :

Արեւելք

ՏԻՏՆՈՍԱԿԱՆ

Վարժապետ մը մեծապատիւ կըլլաւ երբ քննութեան մը հրաւիրվի. պարուն կըլլայ երբ թաղական խորհրդին ներկայանայ . ճիւղացու կըլլայ երբ քննելութեան մէջ գլխուն :


Խմբագիր մը մեծարոյ կըլլայ երբ իրեն նամակ մը ղրկուի ի հրատարակութիւն, Տօյանստընը կըլլայ երբ թղթավաճառը տնոր գրասենեակը երթայ պոռայ :

Բժիշկ մը քարերաւ կըլլայ երբ հիւանդի մը կանչուի . Այլահասան պոռաւքն կըլլայ երբոր հիւանդը մեռնի :

Թաղական մը ճիւղ կըլլայ արձանագրութեանց մէջ, աղաւ կըլլայ շուկային մէջ, շատ անգամ համը կըլլայ ժողովքի մէջ :

ՋԱԻԹԱԿ

Դարձեալ կը խնդրենք մեր մէկ բանի բաժանորդներէն որ յարգելով իրենց խոստումը, այլ եւս հաճին յետեւեալ բաժնեգրները վճարել : Մինչեւ Դեկտ. վերջ չի վճարողներուն թերթերը պիտի դադրեցնենք :



Մ. Զ.

ՀՈՎԱՍՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հատորիկ մըն է, ընթերցանութեան արժանի, որ կրնայ կաղանդի առթիւ ալ իբր նուէր տրուիլ : Դի՛նէ 25 սանդիւմ. շատ առնողներու համար չափաւոր զեղջ Դիմել Զարպհանէլեան գրատուն Վառնա

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՌԱԿ ՄԸ



Կար ու չկար, ժամանակաւ խելացի էշ մը կար. — իշուն խելք ունենալը խնդիր չէր եղած այն ատեն. — այս էշը երջանիկ էր, վասն զի իր տէրը հարուստ և բնաւորութեամբ ալ բարի էր: Այս սուտ աշխարհիս մէջ հարուստին ո՞ր բանը երջանիկ չէ, մանաւանդ բարի հարուստին: Գիշեր մը այս էշը ելին հետ կը խօսի ակոսին մէջ. — այն ատեն կենդանեաց իրարու հետ խօսելու մասին տարակուսի խնդիր չկար —:

«Եզո՛ւկ, կըսէ էշը, ես կը զարմանամ մարդիկներուն խելքին վրայ, որ իրենց մէջ եղած անխելքին «էշ» կըսեն, իբր թէ էշն ըլլար Աստուծոյ արարածոց ամենէն անխելքը. թէ որ իրենք խելք ունենային՝ փոխանակ անխելքին էշ ըսելու, ուրիշ կենդանիի մը անունը կուտային, որ արդարեւ իշուն խելքին հետ բաղդատմամբ տխարագոյնն է, օ՛ֆ, օրինակն ալ ամեն օր աչքիս առջեւ չըլլար:

— Ո՞վ է այդ կենդանին, իշուկ աղբար.

— Ո՞վ պիտի ըլլայ, Եզը՝ իշթէ դուն:

— Ի՞նչ է իմ անխելքութիւնս.

— Կը հարցնես ալ հա, հա, հա, քահ քահ մ'է որ կը ձգէ էշը, շարունակելով հանգերձ իր ճասը. թէ որ մարդիկ իրենք մեկի չափ խելք ունենային՝ անխելքին ոչ թէ էշ՝ այլ եղ ըսելու էին. հաստատեմ ըսածս.

«Դուն ամեն օր օրն 'ի բուն կը տառիս արտը, կը հերկես, կ'ակօսես և այլն, որպէս զի ցորէնն հասնի մարդուն համար, գարին հասնի իշուն համար: Օր մը անգամ հանգիստ չունիս, իսկ ես օրն 'ի բուն կու-

տեմ կը խմեմ. շատ շատ շաբաթը 1—2 առտու տէրս վրաս պիտի նստի ու տանիմ շուկայ: Ինչո՞ւ դուն ալ ինծի պէս չ'ապրիս. թէ որ ինձ չափ խելք ունենայիր, առաւտուն երբ գրեզ արտ տանելու համար գային՝ խելք կընէիր պոչդ տնկել, ճիւղերդ փռել, և որչափ մշտեն՝ չպճրտկալ եւ երբ բնմն տքտքալ. ի՞նչ պիտի ընեն, հարկաւ «եզն հիւանդ է» ըսելով պիտի երթային. դուն ալ այնուհետեւ քէյֆիդ կը նայիս. դուն ասանկ խելք մը ունեցա՞ր մինչև հիմա. ըսէ՛ նայիմ, իրաւունք չունի՞մ եղեր մարդիկն մեզ զարդելու որ անխելքին Եզ ըսելու տեղ էշ կըսեն:

— Իրաւունք ունիս, շնորհակալ եմ քեզմէ, չէն կեցիր, վազն այդպէս կընեմ.

Իշուն տէրը որ իշու լեզուէն կը հասկընար, և ինչո՞ւ չի հասկնար, քանի որ ժամանակաւ էշ մը — Բաղդամու էշը մարդու լեզուաւ կը խօսի, է՞ր մարդ մ'ալ գտնէ իշու լեզուէն չը հասկնայ. — լսած ըլլալով իշուն խօսքերը, երբ առաւտուն կուգան կըսեն թէ «Եզն հիւանդ է, ի՞նչ ընենք», կը պատասխանէ, «է՛շը լծեցէք»:

Էշն անմիջապէս կը տարուի արտը, կը լծուի արօրին, արիւն բրտինք կը թափէ օրն 'ի բուն, հաղար անգամ սա խօսքերն ըսելով, «օ՛խ ըլլայ ինծի, պարապ տեղը մարդոց մեղքը առի, թէ որ ես էշ ու իշու զաւակ չըլլայի, ինչո՞ւ ելնէի ու խրատ տայի եզին, ու այս փորձանքը գլխուս բերէի»:

Էշն իրիկունն ակոս կը մտնէ, տրտում տխուր, սակայն խելք ընելով եզին բան մը չըսեր, գիշերը երկար բարակ մտածելէ յետոյ՝ վերջապէս գլխուն ճաւր մը կը գտնէ. — արդէն ո՞ր անխելքն գլուխը քարին կ'արնելէ յետոյ խելք չը բերեր գլխին ու ճար չը գտներ իւր տէրտին —:

Էշն առտուն կանուխ կ'արթնցնէ՝ կը ըսելով, «եղ աղբար, մեռելի կուլն».

— Մեռնի՛լ, ո՞ր խնդն է որ մեռնիլ ուզէ:

— Անտնկ է նէ՛ կ'աղբար ինձ մտիկ ըրէ. դուն գիտես որ Բաղդամու էշը մարդ-

հային լեզուն գիտէր, ու կը խօսէր, ես անոր ցիւղէն եմ, գիտցած ըլլաս. տէրս կնկանը հետ խօսելով, կը զրուցէ կոր թէ՛ անիկ. եթէ եղը ստտկէ՝ մտէն պիտի զրկուինք, կաշին պիտի մնայ սեղ միայն, մարթել տամ այսօր եղը. միսը կուտենք ու կը ծախենք ալ ինչո՞ւ աստեղ բեար մը ձեռքէ հանենք ր: Եզուկ աղբար, թէ որ մեռնիլ չես ուզեր՝ հիմա ախոռին դուռը բացուելուն պէս չորս ոտքի վրայ կը ցատկես, պօշի տնկելով դէպ ի դուռը կը վազես, որով այն ատեն կըսեն թէ՛ եզն ընտցեր է, ալ ինչո՞ւ մորթուի, քայց թէ որ միտքդ դրեր ես մեռնիլ. . .

— Մեռնիլ, բառաչեց եզն իշուն խօսքը կտրելով, մեռնիլ, հոգս է հատեր, ինչո՞ւ մեռնիմ, աւելի աղէկ է որ տատիմ աշխատիմ քան թէ այլքան շուտ մեռնիմ:

Եղը սուտ չէր, ո՞վ աշխարհիս մէջ մեռնիլ կուզէ. բայց էջը սուտ էր, զի չը կա՞ն միթէ աշխարհիս մէջ շատեր՝ որ սուտ խօսիլ կուզեն իրենց շահուն համար:

Թէեւ էջը այն օրը կ'ապտուտի՝ այլ սափայն իւր տուած խրատին հետեանքն ատեն ատեն ինքն ու իր ցեղ մինչեւ այսօր յԱրարիս կը կրեն, վասն զի այն օրէն ի վեր մարդիկ համոզուելով թէ էշերն ալ կրնան լծուիլ արօրի՝ երբ եզներէն մին հիւանդանայ կամ յանկարծ մեռնի՝ էշ կը լծեն եզան տեղ, մինչեւ եղ մը գտնեն:

Այս առակին բարոյականը Հայելիի ընթերցողաց կը մնայ գտնել, խրատուիլ եւ այնպէս վարուիլ մարդկային ընկերութեան մէջ:

Ա.

Ծ Ի Ծ Ա Ղ

ԿՕՆՍՏԱՆԻՍ ԽԱՂԱՅՈՂՆԵՐՈՒՆ ՎԻՃԱԿԸ

կ. Պոլսէն կը գրեն.

«Գօնասօլիտ խաղացողներէն մէկը հիւանդանալով, երկու ամիսի չափ տունը մնալէ վերջը, անցած օր կելլայ Ղալա-

թիոյ Պօրսան կերթայ, բայց կը նայի որ իր ծանօթներուն տեղ խել մը չի ճանչցած մարդիկներ եկեր են. ասոր պատճառը հասկնալու համար սանդուղին տակի ջրավաճառ և սրճեփ Մարգար աղբօր կը գիմէ:

— Մարգար աղբար, մեծ Ըզլէչօին տեղը եկողին մաղազան ինչո՞ւ գոց է.

— Անիկա բիացաէն փախաւ:

— Էյ թիմուլէոնը չեմ տեսնար կոր, ան ո՞ւր է.

— Ան ալ երեք հարիւր ոսկի պարտք ըրաւ ձեռք փախաւ:

— Չէլէպի թէմիսթօգլին այսօր չեկա՞ն:

— Բաւական ատեն է որ չի գար:

— Ինչո՞ւ.

— Մահան հատաւ:

— Մեր Գրիգորիկը ո՞ւր է.

— Վալութաճին գաբարօ ուզեց՝ չի կրցաւ տալու, անոր համար հիմա չի գար կոր:

— Վասիլաքին ալ չի կայ.

— Ան շատոնց հատցուց փարան:

— Անտոնաքի՞ն ալ հոս չէ.

— Անիկա հիմա Իզմիրի շմէնտը-Ֆէռը պիլէթի է:

— Սա Թանաշ մը կար նէ ան ի՞նչ եղաւ.

— Ութը հազար ոսկի ունէր, հատցունելուն պէս գնաց ինքզինքը ծովը նետեց:

— Միհրանին համար բան մը լսեցի նէ իրա՞ն է.

— Իրաւ է. դաբարօն հատեր էր նէ, աներոջը սնտուկէն հարիւր ոսկի վերցուցեր էր, բռնուեցաւ հիմա ծակն է:

— Սերովքէն ո՞ւր է.

— Հոս չէ:

— Միխալաքի՞ն.

— Փախաւ.

— Չաքար աղան ալ չեմ տեսնար կոր.

— Ան երկու շաբաթ է որ առաւ քալեց:

— Ճանրմ Մարգար աղբար, աս բիւթիւն մարգիկը փախուցիր, հիշ անոնցմէ մէկը չի վաստկեցա՞ւ:

— Ես ութը տարի է հոս եմ, սա դուռնէն դուրս փախչողէն զատ բան տեսած չունիմ:

— Իմ վրաս ալ յուսահատութիւն եկաւ:

— Գէորդ աղա, ինծի բարեկամ զիտես նէ՝ բերնիդ համը տեղն իքէն գնա՝ ուրիշ գործ մը գտիր. չէ նէ աս անգամ ալ գործդ անյաշող երթալով հիւնդնա՞ն նէ՝ անպատճառ Պալըխլըն պոյլամիշ կընես:

ԹՕՄ — ԹՕՄ

Կարծր ընկոյզ մը. — Վերջերս Մանչէսթրի մէջ մէկ քանի գողեր զիշեր ատեն վաճառատուն մը կը մտնեն դրամարկղը բանալու համար և իրենց «արուեստին» ամբողջ կատարելութիւնն ի գործ կը դնեն, բայց չեն յաջողիր. ձգել փախչելէ առաջ, սրածայր գործիքով մը դրամարկղին վրայ կը գրեն. — «Ընկեր, աս ընկոյզը խիստ դժուար կտարուելիք ընկոյզ մըն է»:

ԱՆԻՐԱԻ ԶԵՂԶ ՄԸ

Անցեալները Պ. . . ի մէջ երիտասարդի մը հօրեղբայրը մեռնելով մեծ հարստութիւն կը թողու: Վախճանեալը դարմանող բժիշկը քանի մը օր անցնելէ ետքը իր այցագնաց ցուցակը երիտասարդին ներկայացնելով կը խնդրէ որ վճարէ:

Երիտասարդը հաճութիւն ցոյց տալով հանդերձ կառաջարկէ 50 ֆրանքը գեղջել, այն ատեն բժիշկը բարկացած կը գոչէ:

— Աս ինչ քանահեաւ մարդ եռեր, եղբայր, այսչափ հազար ոսկիի հարստութեան տէր ըլլալդ ինծի կը պարտիս, և տակաւին զեղչ կառաջարկես:

— Շամշաղբամ աղա, իրա՞ն է որ տունդ ծախու ես հաներ:



— Ինչ ընեմ եղբայր, աղէկ փեսացու մը պատահեցաւ, տունս ծախեմ թրախօմա պիտի տամ:

— Ծախէ՛ որ դուն ալ շատերուն պէս անտուն մնաս:

— Աս անանկ չէ, ամեն մարդ կը գովէ կոր փեսացուս. ինծի կըսեն որ աս ամուսնութեամբ փառքս պիտի աւելնայ:

— Աստուած շատ քաջել չի տայ, ես ալ շատերուն պէս անանկ յուսացի, բայց փեսայ առնելէս ետքը փառքս աւելնալու տեղ պարտքս աւելցաւ:

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ



Անառ.



9

Առաջին անսխալ կարգացողին նուէրն է կատակերգութիւն մը:

Թիւ 141 «Հայելի»-ի նկարահանուիլը կարդալ այսպէս:

«Մամուլը դրական աշխարհի լոյսն է»

Վիչէն Վթթարեան

ԽԵՆԴԵՐՈՒՆ ԲԺԻՇԿԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷՍ ԱՐԱՐ

(Շար. եւ պերջ)

Մէր. — Սըվոր նայեցէք, մի աճապարէք ալ կըսէ. կատաղութենէն հիմա կը ճաթիմ, թողէք Պ. Տօքթօր, թողէք որ ուղիկէց կորսուիմ երթամ:

Բժի. — Ի՞նչ զարմանալի մարդ ես. միթէ զքեզ հոս կուպած եմ: աղատ ես. կի՛նաս երթալ:

Մէր. — Վերջապէս ճամբու եկաւ, չնորհակալ եմ պարօն, մնաք բարով, բայց գիտցիք թէ այս մարդավայել վարմունքնիդ ամենեւին չպիտի մոռնամ, (Գուռը կերթայ գոց գտնէ) առ ի՞նչ է, դուռը դոց է. առ կողմինը բաց ըլլալու է. առ ալ գոց է. է՛ պարօն ալ համը փախուցիք, հիմա քեզ հնդկահաւի պէս կը փեթտեմ:

Բժի. — Արիւնը սկսաւ եռալ, կամացուկ մը ականջը խածնելու է:

Մէր. — Պ. Բժիշկ, բաց կըսեմ սա դուռը, պիտի բանա՞ն ապա թէ ոչ. . .

Բժի. — Բարեկամ, գիտցիր թէ ես քու ազէկութեանդ համար կաշխատիմ:

Մէր. — Բացէք կըսեմ սա դուռը:

Բժի. — Այ չարածճի, ի՞նչպէս ընեմ մէյժը սըվօր ականջը խածնեմ:

Մէր. — Կաղաչեմ բացէք սա դուռը:

Բժի. — Բայց բարեկամ, (Ականջը կուղէ խածնել) զիս այսպէս առանձին ձգելով կուղէք երթալ:

Մէր. — Վրաս մի՛ գար, մի՛ մօտենար, հեռունց բարի լոյս:

Բժի. — Այ թշուառական չկրցայ խածնել:

Մէր. — Սա դուռը պիտի բանա՞ն թէ ոչ:

Բժի. — Նախ եկէ՛ք հաշտուինք:

Մէր. — Բայց. . .

Բժի. — Դարձեալ չյաջողեցայ,

Մէր. — Ինչ կայ չիկայ ամենքն ալ պիտի կոտորեմ, քու գլխէդ սկսելով. (Վրան կերթայ աբացի դարնէ)

Բժի. — Օն ուրեմն քեզ տեսնեմ:

Մէր. — Քանի որ այս հարուածները քեզի օգուտ մը չունին՝ ես ալ ինչ կայ չիկայ պատուհանէն վար պիտի նետեմ:

Բժի. — (Ետեւէն վաղէ ականջը խածնէ) Բայց բարեկամ. . .

Մէր. — Այ. . . այ. . . այ. . .

Բժի. — Օ՛հ, վերջապէս խածի:

Մէր. — Ո՛հ խելքս գլխէս գնաց, մեռայ, բաց կըսեմ սա դուռը, (Վրան յարձակի և վզին բաթտուի):

Բժի. — Մոթէս դուռը բաց:

Մէր. — Վերջապէս ճամբու բերի, (Գուռը բացուի և երկու հոգի մաստէլայով Մէրջի վրայ ջուր սրկեն) Ո՛հ առ ի՞նչ է. կրակ կայ ի՞նչ կայ, կորսուեցէ՛ք, կորսուեցէ՛ք:

Բժի. — Քովս մի՛ մօտենար:

Մէր. — (Գրան առջև երթալով) Առաջ դուք հրամմեցէք անցէք:

Բժի. — Ես իմ տունը կը գտնուիմ, դուք հիւր էք, դուք հրամմեցէք: (Ծածուաներուն հետ կերթան):

ՏԵՍԻԼ Ժ.

Փրանսուա, Գլէն.

Փրա. — Այո սիրեցեալդ, իմ Գլէն, Էմիլ տաք աղբիւրները ձգել երթալնիդ իմ վրաս խորին տպաւորութիւն յառաջ բերաւ, այնպէս որ քու սիրոյդ պատճառաւ երկայն և վտանգաւոր հիւանդութենէ մը ետքը ինքզինքս կորսնցուցի, ոչ հօրերնուդ անունը գիտէի և ոչ բընական քաղաքնիդ, սակայն ամեն դէմքս ելլողին զձեզ կը հարցընէի, ո՛հ Գլէն որքան դժուարին բան է խենդ ըլլալ:

Գլէ. — Ըսել է որ յիրաւի հիւանդ էիք:

Փրա. — Անշուշտ, սիրոյդ սաստկութենէն:

Գլէ. — Գիտէ՞ք ամենէն աւելի ի՞նչ բանէ կը վախնամ, մի՛ դուցէ հիւանդութիւններնուդ հետ սիրոյդ կրակն ալ մարի:

Փրա. — Քաւ լիցի, ես միշտ զքեզ պիտի սիրեմ և պաշտեմ:

Գլէ. — Խիստ բարի, բայց հօրեղբայրըդ ո՛ւր է:

Փրա. — Իրաւ, հօրեղբայրս ո՛ւր է՝ զիս հոս առաջնորդողը նա ինքն էր, թէ՛ պէտեւ խնդրոյն ինչ ըլլալը չգիտնալով:

ինչ որ է քանի որ անոր պատճառաւ զքեզ գտայ ինձ ըրած անպատուութեանց ամենուն համար կը ներեմ:

Գլէ. — Ահա հայրակոգայ, իրեն հարցընենք:

ՏԵՍԻԼ ԺԱ

Նոյնք և Բժիշկ, (ետրը) Մէրլօ:

Պրա. — Տէր իմ, հօրեղբայրս ո՛ւր է:

Բժի. — Հօրեղբայրդ պաղ ջուրին պանեօն է:

Պրա.) — Ո՛հ Աստուած իմ:

Գլէ.)

Բժի. — Մինչև որ տակառին մէջ խօթեցի, մօրմէս ծածկաթի քիթէս բերնէս եկա. վերջապէս, ըրի չորի խօթեցի եւ. մինչև վիզը այջուրին մէջն է, երկու հողի քովը կեցած, գլխէն վար միշտ դոյլերով ջուր կը լեցնեն, ձեռքերն ալ կապուած են, որպէս զի չի կրնայ երերալ. բայց ամենէն առաջ անանկ ուժով մը ականջը խածի որ, գետնէն երեք կանգուն վեր ցատկեց: Եթէ յաջողիմ՝ սա ծերունին բժշկել, մեծ համբաւ պիտի ստանամ:

Պրա. — Բայց հօրեղբայրս խենդ չէ:

Բժի. — Ինչ բոլոր, ինչ, զ/ս առանալի տեղ կը դնեն կոր, ես իմ արհեստիս մասնագետն եմ. ասկէց զատ, միթէ դու չէիր ինծի ըսողը:

Պրա. — Ահ, խեղճ հօրեղբայրս, արդեօք որչափ բարկացած է ինձ դէմ:

Բժի. — Բարկանալն ալ խօսք է, կըրակ կտրած է: Ահա կուգայ:

Մէր. — (Մանելով) Եթէ մէկը պաղ ջուրի պանեօն խօսք բանայ ինծի, անմիջապէս վրան յարձակելով բզիկ բզիկ պիտի ընեմ:

Պրա. — Ահ, հօրեղբայր, ներէ ինծի:

Մէր. — Քեզի թշուառական. հիմա աս առնէն մեկնելու ենք:

Բժի. — Մի՛ աճապարէք, խելքերնիդ ազէկ մը գլուխնիդ եկած չէ:

Պրա. — Հօրեղբայր, կը վայլէ՞ քեզի որ իմ անունս խենդ կը հանես:

Մէր. — Լռէ՛, ատիկա ո՛վ ըսաւ քեզի:

Պրա. — Իմ հարստութեանս վրայ աչք ունենալուդ համար...

Մէր. — Չայնդ քաշէ կըսեմ քեզի:

Պրա. — Ու կ'ուզէք եղեր որ տակառին ես չի մեռած, իմ հարստութիւնս...

Մէր. — Տակառին կը մրմռաս, այդ ըսողները ապուր են կերեր, լռէ՛:

Պրա. — Ոչ, մինչև որ զիս չամուսնացնես, չպիտի լռեմ:

Մէր. — Անանկ է նէ կեցիր. Պարոն տօթթօն, ազէկ գիտեմ որ այս երկու երկտասարդները զիրար կաթոգին կը սիրեն, ասոնց կարգուելուն ես հաճութիւնս կուտամ: Ասոր ինչ կըսէք. միթէ հիմա ալ խենդ եմ:

Բժի. — Ոչ, խելքերնիդ գլուխնիդ եկած է, բայց իմ արհեստիս և դործած մէթօտներուս շնորհակալ ըլլալով մեծ համբաւ մը վատկելու համար ինծի ըստորագրութիւն մը տալու էք:

Մէր. — Ես ստորագրութիւն տամ:

Բժի. — Ուրիշ բանի համար չէ, միշտակ բժշկութեանս փող մը տալու համար:

Մեր. — Փայլ տալու համար մի՛, շատ ազէկ, (ժողովրդոց) պարոնայք, ձեզ կը ներկայացնեմ խենդերուն բժիշկը, միշտ սիւ Օվրէն, այս արհեստին մէջ ունեցած յաջողակութիւնը, խենդերը բժշկելու համար գործածած մէթօտները գովելի են, մանաւանդ այն պաղ ջուրին պանեօն այս տեսակ հիւանդութիւնները անմիջապէս բուժելով, քիչ ատենի մէջ կապուելու խենդերը կը խելօքցեն, եթէ ձեր մէջէն իրեն հետ առանձին դէմ առ դէմ տեսնուելու փափաքող կայ՝ նոր փողոցին մէջ թիւ 47 տունը ամեն օր մինչև ժամը վեց կրնայ գտնել:

Պրա. — Բայց սա ալ չի մոռնանք ըսել թէ, ինքզինքը խելացի կարծողը երբեմն առաջին աստ ճանի խենդ մը եղած կրնայ ըլլալ. այսուամենայնիւ, ինչ խենդեր ունիմ որ շատ մը խելացիները ծախու կառնեն, նմանապէս ինչ խելացիներ ունիմ, որ խենդերուն ձեռքովը կը կապուին:

(Վարագոյրը կիջնէ)

ՎԵՐՋ

ОТГОВОРНЫЯ М. СКОРОВО

Печальница „Взаимность“ — Варна.